**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-897-13.08.2024,17.10.2024-ԱռՀ-011/1) ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»** | | | | | |
| 1. | Կառավարություն | 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 46-րդ հոդվածի 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերն առաջարկում ենք փոխարինել «Կառավարության» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է. «Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձեւը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձեւին (տեսքին)»: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 2. | Կառավարություն | Օրենքի նախագծերի փաթեթին լրացվող նոր օրենքի նախագիծ: | Հիմք ընդունելով 2024 թվականին հոկտեմբերի 21-ի ՀՀ Ազգային Ժողովի Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Նարեկ Զեյնալյանի կողմից աշխատանքային կարգով ներկայացված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փոփոխությունների նախագծերի վերաբերյալ հետևյալ դիտարկումները (կցվում է) առաջարկում ենք «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» <u>օրենքի նույն հոդվածի (46-րդ հոդվածի 1-ին մաս)</u> հիմնական կարգավորումների մասով փոփոխությունները և դրա վերաբերյալ մեկ այլ օրենքի (ՀՕ-304-Ն, Ընդունված 2022 թվականի հուլիսի 6-ին) եզրափակիչ դրույթներում և անցումային կարգավորումներում առաջարկվող փոփոխությունները կատարել նախագծերի մեկ փաթեթով՝ նշված հոդվածի մասով միասնական կարգավորումներ ունենալու տեսանկյունից, այդ թվում այդ դրույթների ուժի մեջ մտնելու ժամկետների մասով: Մասնավորապես՝ ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի հուլիսի 6-ի ՀՕ-304-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներառել առաջին ընթերցմամբ ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-897-13.08.2024,17.10.2024-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի հետ մեկ փաթեթում՝ հետևյալ հիմնավորմամբ.<br>ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024թ. հոկտեմբերի 24-ին առաջին ընթերցմամբ ընդունված ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-897-13.08.2024,17.10.2024-ԱՌՀ-011/1) օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օրենքի 46-րդ հոդվածը ամբողջությամբ շարադրվում է նոր խմբագրությամբ: Նույն նախագծի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, և ստացվում է, որ օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 46-րդ հոդվածը ևս ուժի մեջ կմտնի նշված ժամկետում:<br>Մինչդեռ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվելու մեկ այլ նախագծերի փաթեթ, որում ներառված է նաև ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի հուլիսի 6-ի ՀՕ-304-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Սույն նախագծով նախատեսվում է ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 46-րդ հոդվածի մասով սահմանված ուժի մեջ մտնելու և անցումային դրույթներում կատարել փոփոխություն, և արդյունքում հիշյալ ՀՕ-304-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվում է նոր խմբագրությամբ. «2. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները ուժի մեջ են մտնում 2027 թվականի դեկտեմբերի 31-ից: Մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված բժշկական արտադրատեսակները կարող են շրջանառվել Հայաստանի Հանրապետության տարածքում մինչև դրանց պիտանիության (շահագործման) ժամկետի ավարտը:»: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ առաջին ընթերցմամբ ընդունված ***(Կ-897-13.08.2024,17.10.2024-ԱռՀ-011/1)*** օրենքում նախատեսված են ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ ***հիմնական կարգավորումները*** և դրանց ուժի մեջ մտնելու ժամկետ: Իսկ մեկ այլ օրենսդրական նախաձեռնության շրջանակում նախատեսվում են նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ ***եզրափակիչ դրույթներում և անցումային կարգավորումներում*** *փոփոխությունների կատարում*:<br><br>**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>Օ Ր Ե Ն Ք Ը**<br><br>**««ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**<br><br>***Հոդված 1.*** ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի հուլիսի 6-ի ՀՕ-304-Ն օրենքի 3-րդ հոդվածի՝<br><br>1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>«2. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները ուժի մեջ են մտնում 2027 թվականի դեկտեմբերի 31-ից: Մինչև 2027 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված բժշկական արտադրատեսակները կարող են շրջանառվել Հայաստանի Հանրապետության տարածքում մինչև դրանց պիտանիության (շահագործման) ժամկետի ավարտը:».<br><br>2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>«4. Օրենքի 47.2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները ուժի մեջ են մտնում 2027 թվականի դեկտեմբերի 31-ից:»:<br><br>***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:» | | |